

խեցին, ձիթաստանի պտուղներէն քամուած իւղով օծուեցաւ երկնային հրեշտակներու ձեռքով և որ քու կողմէդ եպիսկոպոսական եւ արքայական պատուով ճոխացած՝ սկզբնահօր շիրմին պաշտպան կարգուեցաւ ու հաստատուեցաւ, մինչեւ որ դուն յայտնուեցար իբրև կատարեալ ստուգիւ քահանայ, կարող՝ Ազամը կենագործելու» (Բան. ՂԳ.):

Նարեկացիին այս տողերը Մեւքիսեղեկի նկատմամբ մէկէ աւելի աւանդութիւններ կը յիշեն, ինչ որ կը պակսին Աստուածաշունչին մէջ. իսկ գալով Գողգոթայի մէջ ցոյց տրուած Մեւքիսեղեկի գերեզմանի մասին աւանդութեան վարկածին հաստատութիւնը որոշ է բանաստեղծին՝ «Որ քու կողմէդ եպիսկոպոսական և արքայական պատուով ճոխացած՝ սկզբնահօր շիրմին պաշտպան կարգուեցաւ ու հաստատուեցաւ» խօսքերովը: Այս աւանդութիւնները կը յիշատակուին նաև յունական Յայսմաուուրքին մէջ:

5. — Խաչին մեկ ուրիշ աւանդութիւնը. — Խաչի շարականին Գ. կանոնը կ'ըսէ. «Արևելեան կողմունք ի դրախտին բուսուցին զփայտ խաչին, որ յետ ժամանակաց եկեալ կատարիւր ի տեղւոջն Գողգոթա»: Այս խօսքերը կ'ակնարկեն եբրայական հետեւեալ աւանդութեան. ըստ որում Սեթ՝ հրեշտակին հրամանով գիտութեան ծառին սերմը առած եւ դրած էր թաղուած Ազամին բերանը, ուր աճած ու ծառ եղած էր: Նոյն ծառին բունը կը կենար մինչև Քրիստոսի ժամանակը. Հրեաները կամ զինուորները զայն խաչ կազմեցին եւ Փրկիչը անոր վրայ բեւեռեցին որ քաւեց գիտութեան ծառին յանցանքը:

Բայց Դաւիթ Անյաղթ իր Բարձրացուցիչ ճառին